# ՍԻՕՆ

## ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1866

digitised by A.R.A.R.@

# ՍԻՕՆ

## ԱՄՍԱԳԻՐ

### ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. ԹԻՒ 12. ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1866


# ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիօն հանդիսիս առաջին միամեայ շրջանը լմնալուն՝ կը փութամք մեր խորին շնորհակալութիւնը մատուցանել բարեսէր և բարեպաշտ բաժանորդաց, փոխարէն իրենց համակրութեանը զոր ցոյց տուին մեզ մեր ակնկալութենէն աւելի ։

Սիօն իբրեւ նորածին թերթ, որ չկրնար երբէք ազատ լինել թերութիւններէ, եթէ չկրցաւ ըստ ամենայն մասին գոհ ընել զիրենք, այսուամենայնիւ վստահ լինելով որ իրենց համակրութիւնը պիտի շարունակեն ապագային մէջն ալ ցոյց տալու, պիտի աշխատի երկրորդ շրջանիս մէջ աւելի ընդարձակել իւր նիւթոց սահմանը. պահելով միշտ նոյն սկզբունքը, որոյ ծագումն է աւետարանի վարդապետութենէն և անոր սրբեցուցած բարոյականէն ։ Թողլով ազատ ասպարէզ մեր սկզբունքին ուժը չիմացողներուն առջեւ, մենք երկիւղածութեամբ յարգելով սուրբ Առաքելոյն խօսքը, պիտի աշխատիմք դարձեալ իբրեւ կրօնական թերթ՝ «Մի՛ ինչ առաւել խորհել քան զորժանն խորհելոյ, այլ խորհել ի զգաստանալ». (Հռով. ԺԲ. 3). առանց ձկտեցընելու մեր ձիգը անդր քան զբարին, զհաճոյն և զկատարեալն, որ է Աստուծոյ կամքը. (անդ 2). որու մէջ կը պարունակի ընդհանուրին օգուտը եւ մասնաւորին անձնական վարկն ու պատիւը ։

Երկրորդ շրջանս առանց գլխաւոր փոփոխութիւն առայժմ ընդունելոյ, պիտի շարունակէ ազգային տեղեկութիւններ հաղորդել, որոց մէջ կը պարունակի մասնաւորապէս Նշխարք ազգային պատմութեան ըսուած մասը ։

Նաեւ գրագիտական մասը, որով պիտի հրատարակեմք ուսումնակա-

նաց համար անծանօթ հեղինակաց վարքն ու աշխատասիրութիւնները ։

«Առաքինի և բարեկիրթ պատանի» վերնագրով բարոյականը, զոր արժանապատիւ և ուսումնական Յովհաննէս էֆէնտին Քիւրքճեանօֆ խրկած է մեզ Բազմավէպի մէջէն քաղելով, ինչպէս կ՚ըսէ, և իւր կամքն է անոր մէջ գանձեալ գեղեցիկ բարոյականութիւնը Սիօնի միջոցաւ ալ կրկնելով հաղորդել ազգիս պատանեացը, վասն որոյ և մեք սիրով հաճեցանք ընդունել զայն յօգուտ նոյա ։

Անոնցմէ ի զատ առաւելագոյն փոյթ պիտի տարուի կրօնական յօդուածները աւելցնել, եւ ի մասնաւորի պիտի հրատարակեմք մաղըրպցի Ռապպի հրէի մը դարձն ու անոր ընտիր աշխատասիրութիւնը, զոր գըրած է յապացոյց Քրիստոսի ճշմարիտ որդի Աստուծոյ ըլլալուն, որով քրիստոնեայ աստուածաբաններն իսկ զարմացուցած է ։

Անոնցմէ ի զատ պատրաստուած է նաեւ առանձին յօդուած մի սուրբ Յակոբեայ վանաց վերայօք հանդերձ գաղղիական բնագրաւ ի տեղեկութիւն մեր Եւրոպացի յարգոյ բաժանորդաց ։

Այս առթիւ պարտք կը համարիմք ծանուցանել բարեսէր հասարակութեան, որ Ս. Աթոռոյս տպարանը իւր Հանդիսին միջոցաւ պատրաստ է սիրով հրատարակելու նաեւ գաղղիական լեզուաւ յօդուածներ գրեալ ի պաշտպանութիւն ազգային եկեղեցւոյն և իրաւանց ։ Վասն զի Սիօնը իւր Եւրոպացի բաժանորդաց միջոցաւ դիւրութիւն ստացած է Եւրոպայի զանազան կողմերը երթալու . և եթէ, ինչպէս կը փափաքիմք եւ մեք, գաղղիական յօդուածներ եւս ամեն թերթիս մէջ պարունակելու ըլլան, աւելի մեծ համակրութիւն ըստանալիքն իրենք կը հաստատեն . բայց դժբաղդաբար մեր փափաքը կատարուելու համար տակաւին դիւրութիւններ կը պակսին ։ Թողլով ուրեմն ժամանակին՝ թէ այս և թէ ուրիշ կատարելութիւններ ալ տալու յաջողութիւնը, կը կնքեմք 1866 տարւոյ ամսագրոյս առաջին շրջանը, խնդրելով ազգասէր ընթերցողներէն իրենց համակրութեանը հետ մէկ տեղ նաեւ ներողամտութիւննին շնորհել, ի քաջալերութիւն խմբագրող Սւխտիս ։

1867 տարւոյ ամսաթերթերը իւրաքանչիւր ամսոյն վերջերը պիտի հրատարակուին ։

Նաեւ տարեկան բաժանորդագինը, որ մէկ ու կէս արծաթ մէճիտ և փոստայի վարձքն ալ ընդունողին վերայ էր, այսու ամենայնիւ յարգոյ բաժանորդաց դժուարութիւն չպատճառելու համար, սոյն ներկայ տարւոյս ամբողջ փոստայի վարձքը խմբագրութեան տեսչութիւնը վճարեց բաւական զոհողութեամբ . վասն որոյ առաջիկայ նոր տարւոյս համար կէս մէճիտ իբրեւ փոստայի վարձ վերադիր ընել արժան և իրաւունք համարեցինք, և կը յուսամք որ արգոյ բաժանորդք առ սէր սուրբ Աթոռոյս յօժարութեամբ յանձնառու կը լինին կանխիկ վճարելու տարեկան մէկ ու կէս մէճիտին հետ ։

digitised by A.R.A.R.@



Ցաւ էր մեզ արդարեւ գուժատու լինել մեր ընթերցողաց այնպիսի անձի մը անակնկալ մահուան համար, որոյ կեանքը՝ անգիւտ գանձ էր սիրելի ազգիս, և մահն ալ անդարմանելի կորուստ. այն է Պալեան Վսեմաշուք Կարապետ Ամիրայն: Հայ ազգը, և արդի վիճակի Հայ սերունդը զգաց և պիտի զգայ յապագայս, և ցաւօք սրտի պիտի յիշէ միշտ Վսեմաշուք Ամիրայիս կորուստը, որոյ ձիրքերն և գործքերը մէկ մէկ առաքինութեան տիպարներ էին, եւ իւր վարքը կը համարձակիմք ըսել՝ բարոյական եւ աւետարանական առաքինութեանց գրքոյկ մըն էր, զոր անտարբեր աչօք կարդաց Հայը ի կենդանութեան Հանգուցելոյն, այլ զինի մահուան ոսկեդրոշմ պիտի քանդակուին կենդանի տախտակներու վերայ յանմահ յիշատակ Պալեան ազնուափայլ Գերդաստանին: Մեր և որ եւ իցէ մէկու մը տալիք գովեստները, որ մարդկային շնչոյ արդիւնք են միայն, չունին երբէք արժողութիւն մի այն երանութեան առջեւ, որում արժանացած է հանգուցելոյն երջանիկ հոգին: Տարապայման վիհ մը՝ զոր բացաւ նա ազգին սրտին մէջ, անդունդ մը՝ զոր իւր բարեպաշտական և ազգասիրական արդիւնքներովը լցուցած էր, ուրիշ կերպով կարելի չէ լեցընել, բայց եթէ այն մեծամեծ ակնկալութիւններով՝ զոր ունիմք ազգովին իւր բարեյիշատակ և ազնուածնունդ որդւոցը վերայ. որոնք ոչ այնչափ փարթամութեան և աշխարհային վաղանցիկ գանձերուն՝ որչափ իրենց Հօրը աստուածահաճոյ վարուցն ու առաքինութեանցը ժառանգորդ պիտի ըլլան. և այն ժամանակը պիտի ըսէ ներկայ և ապագայ Հայը թէ Պալեան Կարապետ Ամիրայն ողջ է և կենդանի է իւր զաւակացը վերայ: Սուրբ Աթոռը, որ զանազան առիթներու մէջ վայելած է լուսահոգւոյն շնորհքները և բարիքը, փութաց կիրակի օր աստուածային պաշտօն և պատարագ մատուցանել իւր հոգւոյն համար: Ներկայ էին սոյն հոգեւոր և սրտաբուխ հանդիսիս Ժառանգաւորաց դպրոցի քըսանի չափ սանունքը, որոնք ի պատիւ հանգուցելոյն առաջին անգամ դպրութիւն ըրին սուրբ Յակոբեայ մայր եկեղեցւոյն մէջ. և Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն ալ առանձին ատենախօսութեամբ Վսեմաշուք Ամիրային ազգասիրական գործքերն կենդանի նկարագրելով. իւր ցաւակցութիւնը յայտնեց հրաւիրելով զժողովուրդը աղօթել Նորա հոգւոյն համար:

# ԱԶԳԱՅԻՆ

## ՆՇԽԱՐՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն և վերջ. տես թիւ 11. երես 167։)

Յիշեցինք վերը Յակոբ վարդապետի ձեռօք հայ եկեղեցւոյ մի կանգնիլը. չեմ գիտեր ինչ պատճառաւ այն եկեղեցւոյ շինութիւնը տեղւոյն այլազգի բնակչաց աչքին փուշ եղեր էր. որոնք տարին անգամ մի հրամանագիր ու ֆէթվա հանել կու տային կործանելու համար, և ամեն անգամ կաշառքը իրենց զայրոյթը կ'իջեցունէր, և խաղաղութեամբ զիրենք ետ կը դարձընէր։ Բայց եկաւ ժամանակ մի որ կաշառքն ու ջերմ աղաչանք ու արտասուք օգուտ չըրին, և եկեղեցին հիմն ի վեր տապալեցաւ Յունաց ազգին զոհ ըլլալով։ Ահաւասիկ ինչպէս։

Այլազգի չէլէպին մէկը հօռմի տղայ մի կը յափշտակէ կը տանի։ Յոյն եպիսկոպոսը լուր կու տայ Հայոց, և տղայն ազատելու համար անոնց օգնութիւնը կը խնդրէ ի սէր հաւատոյ։ Հայոց երեւելիքը քրիստոնէական եղբայրսիրութեամբ կը փութան յօգնութիւն, և յունաց հետ միաբան կ'երթան դատարան, եւ սօռալով կանչելով՝ վերջապէս տղայն չէլէպին ձեռքէն կ'ազատեն կ'առնուն։ Այս ոխը այլազգեաց սրտին մէջ մնաց անթեղուած կրակի նման. և պատեհ առթի կը սպասէին վրէժխնդիր ըլլալու թէ Յունաց և թէ Հայոց։ Ժամանակէ մի յետոյ առիթն իրենց ներկայացաւ (1629 ին)։ Յիշատակութեան հանդէսի մի մէջ, ուր տեղ քանի մի գիւղերէ մարդիկ հաւաքուած ու ժողված էին, յափշտակուած հօռմի աղու յիշատակութիւնը կ'ըլլայ. ամենուն սիրտը յանկարծ կը բորբոքի. հին ոխերը կ'արթննան, ու միաբան ու միախորհուրդ կ'որոշեն մեջերնին քինախնդիր ըլլալու Հայոց և Յունաց։ Նոյն միջոցին քննիչ (թէֆթիշճի) մի կու գայ հոն շատ զօրքով ու շիտակ հանդէսը եղած տեղը կ'երթայ. հրաւիրեալք տեսնելով զինքը՝ ձայներնին կը բարձրացընեն և կըսկըսին գանգատիլ Յունացմէ, թէ տաճկի տղայն առին ու հայացուցին։ Գործքը կրօնքի վերաբերեալ ըլլալուն՝ բաւական էր միմիայն յիշելը զայն արքունի պաշտօնէի մի դիմաց, որ իսկոյն զայրացաւ ի հոգի իւր։ Այլազգիք ամենքը միաբան դիմեցին ի վրէժխնդրութիւն. ձերբակալ ըրին Յունաց գլխաւոր ազգապետը ու կախեցին. Նոյն մահուամբ պիտի դատէին նաև եպիսկոպոսը՝ թէ որ նա քանի մի օր յառաջ վախճանած չըլլար։ Յետ այնորիկ կը դառնան քննիչ գործակալին և Հայոց վրայ կը գանգատին, ըսելով թէ այսչափ ժամանակէն ի վեր է կաշառքով եկեղեցի շինած են առանց տէրութեան հրամանին։ Գործակալը թէ եւ առջի անգամ Հայոց հեզութիւնն ու հաւատարմութիւնը ճանչելով՝ հաւանութիւն չէր ցուցընէր անոնց. բայց նոքա այնչափ ամբաստանութիւններ կուտեցին ժողովրդին վրայ, մինչեւ որ հրաման առին եկեղեցին քակելու։ Հոն տեսնելու էր այլազգեաց խառնամբոխ բազմութիւնը, որոնք մարախի նման թափեցան եկեղեցւոյն վրայ. ժամը ցերեկուան ինն էր, մինչեւ մութը կոխելը այն ահագին շէնքը որ 15 դուռ ունէր, կ'ըսէ պատմիչը, խցերն ալ հետը հաշուելով, զամենքն ալ քակելով կրեցին տարան իրենց տուները, մինչեւ պատերուն մէջի փայտերն իսկ ուզեր էին քակել. և եթէ գիշերը վրայ չը հասնէր՝ քարերն անգամ պիտի կրէ-

digitised by A.R.A.R.@

ին ։ Հետեւեալ առաւօտը լուսնալուն երբ կրկին դարձաւ ժողովուրդը որ մնացեալ նիւթերն ալ տանին, գտաւ որն ու գործակալը մարդ խրկեցին որ չդպչին նիւթերուն և տարածնին ալ ետ բերեն ։ Բայց եղածն եղած էր և վրէժխնդրութիւնը իւր չափը լցած ։ Մեր պատմիչը Զաքարիա վարդապետ մի կը յիշէ, որ թերեւս առաջնորդ էր այն ժամանակ, և այլազգեաց յարձակում ըրած միջոցին եկեղեցւոյ մէջ կը գտնուէր ։ երբ իրեն լուր տուին որ դուրս փախչի, նա չէր հաւատար, մինչեւ որ հողն ու քարերը գլուխն ի վար տերեցին, այն ժամանակ զգաց, ու գտան արտասուօք ու եկեղեցւոյն չեմեքը վերջին անգամ համբուրելով, օրհնեց Աստուծոյ կամքն ու փութաց դուրս ելաւ ։

Շատ օր չանցաւ վերան՝ այլազգեաց մէջէն երեւելի և իշխանաւոր մարդիկ տեսնելով տէրութեան անձնանուէր ու հպատակ ժողովրդեան սըրտին կսկիծը, զղջացին եղածին վերայ, ու իրենց քով կանչելով անոնց գլխաւորները՝ ցաւակցաբար մխիթարեցին զիրենք, և խոստացան որ Յունաց տասուերկու եկեղեցիներէն մին որ ուզելու ըլլան՝ իրենց տան ։ Յոյնք լսելով զայս և կռահելով որ այլազգի երեւելեաց խօսքը ի գլուխ կ՚ելնէ, անմիջապէս հաճութիւն տուին իրենց եկեղեցիներուն մէկը Հայոց տալու ։ բայց համբերեցէք, կ՚ըսէին, որպէս զի նոր առաջնորդ մի կարգուի, և անոր հրամանաւը տրուի ։ ասիկայ նենգութիւն՝ և ոչ անկեղծութիւն էր ։

Թէ՛ եկեղեցւոյ քակման եւ թէ Յունաց տուած խոստման լուրը շուտով հաղորդուեցաւ ի Պոլիս ։ Նոյն միջոցին Գրիգոր Կամախեցի հայրենիքէն դառնալով՝ Պոլսեթիա կը գըտնուէր ։ որուն գրեցին Թէքիրտաղցիք բոլոր անցած դէպքերը և Յունաց խոստմունքը ։ Գրիգոր վարդապետ, որ լաւ կը ճանչնար Յունաց ազգին բնաւորութիւնը և անոնց խօսքերուն արժէքը, չհաւատալով երբէք անոնց ստորագրութեանը, իսկոյն կը գրէ ի Թէքիրտաղ ու կը պատուիրէ որ առանց ժամանակ անցընելու թաղ խնդրեն եկեղեցին, և որ օրի չըթոգեն, որպէս զի չըլլայ թէ այլազգիք ալ պաղելով գանց ընեն, և Յոյնք իրենց խարդախութեամբը Հայոց երեսին խնդան ։ Այս զգուշութիւնը պարապ չելաւ ։ վարդապետին գըրած նամակը բարձի տակ մնաց ։ ժամանակ անցաւ և Յոյնք ոչ միայն եկեղեցի տալ չուզեցին, այլ եւ ի թըշնամութիւն դարձան հայերէն իրենց առաջնորդովը ։ Ժողովուրդը շուարած մնաց ։ մէջերնին բարեպաշտ և ժամասէր եղողները միայն ըսին որ ունեցածնին ծախեն ծախուորեն և ուրիշ երկիր երթան ։ իսկ անոնք որ հաւատոյ կողմանէ ցուրտ ու անտարբեր էին, եկեղեցւոյ հարկ չէին սեպեր ։ մէկէն հողին ազատեցանք, կ՚ըսէին, աղօթել ուզողը թող իւր տանը մէջ աղօթէ ։ Անոնց համամիտ քահանայք ալ կային, որոնք դատաւորին կեղծ հրամանը պատճառ ըընելով՝ թէ իրենք և թէ իրենց նայելով ամէն երէց՝ սկսաւ իւր տանը մէջ ժողովուրդ հաւքել և եկեղեցւոյ ամէն խորհուրդը կատարել ։ աշխարհականք ալ հասարակ երբ տեսան որ քրիստոնէութեան վերաբերեալ ամեն խորհուրդ անթերի կը կատարուի, մեզ եկեղեցի պէտք չէ ըսելով՝ խապաւ ըսեցին ։

Գրիգոր վարդապետ երբ իմացաւ այս որոշմունքները ու ժողովրդեան

digitised by A.R.A.R.@

եկեղեցիէ ձեռնթափ ըլլալը, լաւ զգալով թէ անոր վախճանը կործանումն է ազգին և կրօնին, վշտացաւ իր սրտին մէջ, եւ գրեց երկրորդ նամակ կէս մի սպառնալեօք և կէս մի աղաչանքով եւ յուսադրութեամբ, խոստանալով՝ ստակով եւս օգնել իրենց, և եթէ չբաւեմ կ'ըսէր, գիրքերս, գաւազանս, եմիփորոնս եւ թագս կը ծախեմ ձեր եկեղեցւոյն համար։ Նաեւ առ ժամն 20.000 ստակի գումար մի պատրաստ ցցուց անոնց, արքունի դրան ծախուցը համար, և եթէ անով յոյս մի ծագելու ըլլայ, խօսք կու տար ուրիշ ստակ ալ ճարելու։ Նաեւ սաստիկ պատուիրանաւ կը զգուշացընէր զիրենք աներաւ մէջ աղօթելէ եւ կենալու, և ուրիշ խորհուրդները դադրեցընելու բաց ի հաղորդութենէ, որպէս զի ժողովուրդը անհոգ չնստի և հակառակորդաց ալ բերանը լեզու չտրուի։ Նոյնէ ի զատ հրաման ըրաւ, որ քանի մի քահանայ և քանի մի բանիբուն աշխարհականներ գան ի Պօլիս սոյն գործիս համար։ Երբ եկան ասոնք, խոստացեալ 20.000 ստակը ձեռուընին առնելով խրկեց զանոնք տէրութեան դրուները գործ տեսնելու. և ինքը իր ձեռնասուն աշակերտը տէր Գասպար քահանայն՝ որ քաջ հելլէնախօս էր, Յունաց Պատրիարքին մօտ յուղարկեց, որու քով կը գտնուէր բաղդովին նաեւ Հերակլեայ յոյն մետրապօլիտը, որու իշխանութեան տակն էր Թէքիրտաղու վիճակը։ Տէր Գասպար իր ճարտար և յունախօս լեզուովը եղած անցքերը պարագայիւք պատմելով՝ այն աստիճան ազդեցութիւն ըրաւ անոնց սրտին, մինչեւ զերկուսն եւս համոզելով՝ իրենց ազատ կամօքը մէկ մէկ ձեռագիր տըւին եկեղեցին տալու. և այս բանիս համար 5000 ստակ տուաւ Յունաց Պատրիարքարանին իբրեւ ծախք. իսկ մետրապօլիտը ամենեւին ստակ մի չընդունեց։ Ուրախութեամբ եւ դարձաւ տէր Գասպար հետն ունենալով երկու ինքնագիր յեակարները, որոնք եղան իբրեւ հիմն եկեղեցւոյ ստացման։

Յետ այնորիկ Մ–ֆթիին քով գնացին հրաման խնդրելու. բայց նա մերժեց զիրենք, և չուզեց հաստատութիւն տալ գործքին, ըսելով՝ թէ եկեղեցւոյ հրաման տալը մեղք է. Ասկէ յուսերնին կտրած՝ մօտեցան Րէճապ փաշային քով. նա ալ նոյն պատասխանը տուած էր, բայց քաղցր դէմքով, և խնդրած էր իրենցմէ որ Յունաց Պատրիարքէն գիր բերեն և ըստ նորա գրոյն՝ հրամանագիր տայ։

Պատրիարքին և մետրապօլտին նամակները՝ զոր քովերնին ունէին, անմիջապէս փաշային կը ներկայացընեն. զոր տեսնելով կը հրամայէ իսկոյն՝ որ հրամանագիրն ու հրովարտակը տրուի իրենց։ Ուրախութեամբ կ'առնուն զանոնք ու կը փութան ի Թէքիրտաղ ի գործ դնելու յոյն Պատրիարքին ու տէրութեան հրամանը։ Յոյնք և իրենց առաջնորդը Պատրիարքին եւ մետրապօլտին գրութիւններն ընդունելով՝ վար կը դնեն և չեն ուզեր տալ եկեղեցին. Ներսէս րէիզը բարկանալով եպիսկոպոսին վերայ, ու սպառնալով անոնց եկեղեցին ալ քակել տալ, ինչպէս որ Յունաց պատճառաւ Հայոցը քակուած էր, կ'երթայ շիտակ տեղւոյն կառավարութեան բողոք ընելու։ Եպիսկոպոսը վախնալով Ներսէսի սպառնալիքէն, և խելքը կտրելով որ յիմարութիւն է ներհակիլ թէ Պատրիարքին կամացն և թէ տէրութեան հրամանին, կանչել կու տայ զՆերսէսը, փէշտըմալճի փանոսն ու

digitised by A.R.A.R.@

տէր Աստուածատուր քահանայն, ու կը խոստանայ անոնց եկեղեցին տալու, ու կը յայտնէ՝ թէ չտալուն պատճառը իւր ազգէն վախնալուն էր։ Վասն որոյ Հայք կը խոստանան բեռ մի ստակ հատուցանելու ազգին. և քառասուն դահեկան ալ իրեն եպիսկոպոսին կու տան։ Ասոր վերայ սիրով կը հանէ Պարիարքին ու մետրապոլտին թղթերը իրենց կը յանձնէ, և ինքն ալ քանի մի գլխաւոր մարդոց, քահանայից ու ժողովրդոց համահաճութեամբը ձեռագիր կու տայ մեծ երդումներով՝ որ տուածնին տուած է առանց հակառակութեան և հաստատուն կերպով։ Եւ եկեղեցւոյ բանալին եւս կու տայ երկու Յոյն աբեղայից, որ երթան բանան դուռը ու զիրենք ներս մտցընեն ու բանալիներն ալ անոնց յանձնեն։ Կը խրատէ եւս զՀայերն որ ներս մտնելնուն անմիջապէս պատարագ մատուցանեն, որ յունաց ռամիկ ժողովուրդը դադրին ու խռովութիւն մի չհանեն. վասն զի իւր ազգը, կը յաւելու նա, Հայոց ձեռօք պատարագ մատուցումը տեսնելով՝ ալ հոն չեն մտներ (1)։

Յոյնք դադարեցին իսպառ, եւ սէրն ու խաղաղութիւնը յաջորդեց երկու քրիստոնեայ ազգաց մէջ, եւ Հայք բացարձակ տէր եղան իրենց ստացուածքին. եւ եկեղեցւոյ հետ մէկ տեղ ժողովրդեան բարեպաշտութիւնն ալ սկսաւ նորէն ծաղկիլ. Սակայն շատ սուղի նստաւ իրենց եկեղեցւոյ ստացումը. միայն հրովարտակը դատարանի արձանագրութեանց մէջ անցընել տալու համար 50 հազար ստակ տուին դատաւորին. քիչ օրէն նա իւր պաշտօնէն զրկուելով, անոր յաջորդը կրկին 7000 ստակ պահանջեց առաւ, այնպէս որ թէ հոն ի Թէքիրտաղ և թէ ի Պօլիս եղած ծախուց բոլոր գումարը կը հանի չորս բեռ ստակի։ Որու մէկ բեռն ու 15 հազար ստակն ինքը Գրիգոր վարդապետ կը հատուցանէ, մնացեալը Թէքիրտաղցիք, Ադրիանուպօլսեցիք, Կ. Պօլսեցիք ու Կամախեցիք կը հանգանակեն։ Յունաց տուած և կամ լաւ եւս է ասել՝ ծախած եկեղեցւոյն տեղը խիստ փոքր էր ու շէնքը հին, բայց քիչ ժամանակէն յետոյ բակին մէջն եղած հոռմի տունն ալ ծախու առնելով ընդարձակուեցաւ, և եկեղեցին ալ փլչելով նորէն շինուեցաւ հանդերձ խցերով ու առանձին յարկերով։ Այսպէս Թէքիրտաղցիք շատ նեղութիւններով ու ստակէ թափթփելով հազիւ թէ եկեղեցւոյ մի տէր եղան իրենց նոր հայրենեացը մէջ։ Կ'երեւի որ թէ՛ տաճկաց և թէ յունաց տուած այնչափ նեղութեանց սիրով համբերելնին պատրաստեց իրենց գեղեցիկ ապագայ մի և պայծառութիւն այնպիսի եկեղեցւոյ, որ տարուէ տարի խուռն բազմութիւն հաւատացելոց կը քաշէ դէպ իրեն. և վառ կը պահէ իւր մէջը ճշմարիտ քրիստոնէութեան ոգին ու բարեպաշտութեան եռանդը։ Եթէ ներելի է մեզ՝ կը մաղթեմք, որ Գրիգոր վարդապետի ազգասիրութեան անձնուրացութեան և աստուածպաշտութեան ոգին հանգիցէ իբրև Եղիայի ոգին՝ իրեն յաջորդացը վերայ ալ. նա իբրև իւր քաղաքակիցքը գրդաց գուր-

(1) Սուրբ Երուսաղեմի Յունաց միաբանութիւնը կ'երեւի թէ այս մոլեռանդութիւնը չունի, ապա թէ ոչ Քրիստոսի սուրբ Գերեզմանը, Ծննդեան սուրբ Այրը, սուրբ Աստուածածնի Գերեզմանը, ուր տեղ ամեն օր Հայ վարդապետաց ձեռօք պատարագ կը մատուցուի, կը պարտաւորէին հեռանալ այն տեղերէն, և թողուլ զանոնք ի սպառ Հայոց ձեռքը, բայց ի սուրբ Գերեզմանէն Քրիստոսի, ուր տեղ լատինք ալ կը պատարագեն։

digitised by A.R.A.R.@

գուրաց անանց վերայ, տանք ալ երբեւ հովիւ յԱստուծոյ յանձնեալ ժողովրդոց վերայ հայրաբար խնամելով առաջնորդեն զանոնք յուսումն ճշմարիտ կրօնի, բարուց և քաղաքակրթութեան։ Քանզի անցաւ այն նեղութեան և աններողութեան դարերը, և հիմայ շնորհիւ բարեխնամ տէրութեան կը վայելեմք ազատութիւն ընչից, ազատութիւն խղճի և որ մեծն է ազատութիւն կրօնի եւ պաշտաման. այս ուրեմն այսպիսի լուսաւորեալ քաղաքակրթեալ դարու մէջ կը պարտաւորին թէ աշխարհական եւ թէ հոգեւոր գլուխք եւ գլխաւորք՝ ազգին և ժողովրդեան բարեկրթութեան հոգել և գէթ ի լուսաւորութիւն զանոնք առաջնորդել. յորում կը կայանայ ճշմարիտ կրօնին ու բարոյականին ուսումը։

# ՊԱՏՄԱԿԱՆ

Օրագրութեան ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի Ս. Աթոռոյ՝ յԵրուսաղէմէ ի Կ. Պօլիս։

(Տես թիւ 8. երես 141)։

Եւ ի նոյն օրն արքայական նաւն ի ներքոյէն եղ արտաքս. և ի մարտի տասներեք Վէզիրն մեծ ալայի- եղ ի Սամաթիօլու՝ գնալ ի պատերազմ ի վերայ Նեմչէու. և յԱնատակ որդւոյ կիրակէին եկաք ի սուրբ Աստուածածնի եկեղեցին, և խորհուրդ արարաք, և մարդ յղեցաք առ Փուանկօղլի Իշլէին, զի վեր բանն հոգացէ. և յօր գարնանամտին եկաք ի սուրբ Գէորգայ եկեղեցին։ Եւ ի թուին ՌՃՁԷ (1738) ամին յապրիլ երկրորդ օրն զսուրբ Զատիկն անդ ի սուրբ Գէորգայ եկեղեցին տօնեցաք։ Ի նոյն ամսոյ քսանեւչորս գնացաք յՍկուտար զաւուրբ տօն Համբարձման Քրիստոսի և զՀոգւոյն Աստուծոյ գալստեանն անդ կատարեցաք. և ի յունիսի չորս ի սուրբ Աստուածածնի եկեղեցին եկաք։ Եւ զկնի ութ աւուր եկաք յՍկուտար զՎարդավառի տօնն անդ տօնելով։ Յօգոստոսի եօթն կրկին ի Ս. Աստուածածնի եկեղեցին եկաք վասն տօնին և վասն ուխտաւորացն նուէրին. որ և զկնի Վերափոխման տօնի Մօրն Աստուծոյ յօգոստոսի քսան եւ մէկ յերկուշաբթի օրն ի տասն ժամու ցերեկին Աստուծով եղ ուխտաւորաց նաւն յՍուողի գանէն (Պումկարբու) և գնաց։ Աստուած բարի ճանապարհ տայէ։ Եւ ի նոյն ամսոյ քսաներկու օրն եկաք յՍկուտար ի վանքն մեր։ Եւ ի վերայ հնոյ երեք բաժին խաղողոյ այգեաց զոր ունէաք մերձ յարակից նորա երեք բաժին ալ մեծաւ ջանիւ գնեցաք և խառնեցաք ի միմեանս, որ մեծացաւ. և ի ներքոյ օդայէն նոր գինետուն շինել տուաք, զի առաջինն փոքր էր. և ի Տօպգափը առջեւն ղալդըրըմ տուաք անել. և ի մէջ պաղչային ամարան նստելոյ տեղ. և այլ պատշաճաւոր շինուածք եղեւ։ Եւ թէպէտ Երուսաղէմայ վանք ասէին, սակայն տեղի սուրբ պատարագի ոչ գոյր. վասն որոյ ի հիւսիսակողմն օդայ մի ի վերայ գետնոյ տուաք շինել և սեղան կանգնեցուցաք, և գաղտ ի գիշերի օծի յանուն Աստուծոյ և մեծի առաքելոյն սրբոյն Յակոբայ որդւոյն Զեբեդեայ. և ի վերայ անարժանս զՔրիստոս պատարագեցի, Տէրն հաստատուն պահեսցէ, ամէն։

Այլ և ի սուրբ Աստուածածնի եկեղեցին Սամաթիօլու սուրբ Երուսաղէմացւոց տեղի իջեւանի ոչ գոյր.

digitised by A.R.A.R.@

հին տունն յեկեղեցւոյ Հախբիքէն զկէսն տուաք քակել, և արդեամբք մերովք շինել մեծ օդայ մի կրկին սրահիւք ներքոյ և վերոյ, վերակացութեամբ մեր մահտեսի Յակոբին որ շատ աշխատեցաւ. և յատկացուցաք տեղին իջեւան գալոց Երուսաղէմայ միաբանից։

Ի հոկտեմբերի տասն եւ չորս Վէզիրն ի պատերազմէն դարձեալ եմուտ ի Ստամպօլ. և ի նոյեմբերի քըսան եւ ինն եկաք ի յՈւսկուտարու ի սուրբ Աստուածածնի եկեղեցին, զտօն սուրբ Ծննդեան Տեառն մերոյ անդ տօնեցաք. յառաւօտն մեղաւորս ժամարար ի սուրբ Յովհաննու սեղանն։ Ի մարտի տասն եւ մէկ, յերկրորդ շաբաթու պահոց կիրակէին յուլթ ժամու ցերեկին զ... եկէն Մէհմէտ փաշայ Վէզիրն յանկարծ վերուցին եւ ի Ռոտոս սուրկուն արարին ի կորուստն. և զԱյվազ Մէհմէտ փաշայն ի տեղի նորա Վէզիր եդին, և ի վերայ Նէմչէու կրկին ի պատերազմ գնացին բազմութեամբ. իսկ մեք ի մարտի տասն եւ ինն և ի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն ելեալ եկաք ի Գալատու Ս. Հրեշտակապետաց եկեղեցին։ Իսկ զկնի աքսորելոյն զՎէզիրն չար եւ հաստատելոյ զԱյվազ փաշայն Վէզիր, ինքն աստ ոչ էր, այլ ի Վխային, վասն որոյ նախ զկնիքն արքայի յղեցին Սիլիհտարիւ, և ապա զզօրսն, և յետոյ տեղւոյս Գայմախամն զմեծ սանճախն առեալ բազում զօրօք գնաց մինչ յԷտիրնէ, և նոր Վէզիրն ընդառաջ եկեալ անդ՝ էառ զսանճախն. և Գայմախամն դարձաւ աստ, և նա մնաց անդ։ Աստուած զվերջն ի բարին արասցէ. ամէն։

Եւ թէ ոք կամի զորպիսութիւն եղանելոյն մեր ի սուրբ Երուսաղէմէ և գալ ի Ստամպօլ, առոյգ պատճառն այս է. զի աստուծով զկնի զանթիւ պարտս որբոյ Աթոռոյն հատուցանելոյ, և զբազում տեղիս շինելոյ և նորոգելոյ զսուրբ տեղիսն և զԳահլն մեծ, խորհեցաք զհէտիճէրիֆն և զամենայն սէնէթս որբոյ Աթոռոյն նորոգել տալոյ, որ և եղեւն իսկ Աստուծով։ Զոր տեսեալ զամենայն զայսոսիկ գողոց և ամբարտաւան... ազգն Յունաց, դառն նախանձու լցեալ նոցա, թէ ընդէ՞ր ազգն Հայոց զօրացան. և ի Ստամպօլ մեծ աղմուկ յարուցին ի վերայ մեր, թէպէտ չէր անդ. որ և բազում կաշառս տուեալ Դրան մեծամեծաց՝ մինչեւ զԱրքայն եւս դրդեցին, թէ Հայոց ազգն զօր է արեր Հոռոմոց։ Որ և եկեալ յԵրուսաղէմ ի մեծ Դրանէն մարդ, և զնոր հէտիճէրիֆն (Հայոց) առեալ տարան և ետուն պատռել. զոր գիտէ Տէր՝ զի բնաւ նոցա վնաս ոչ եմք հասուցեալ, և մեզ այսպիսի զրկողութիւն արարին, և զերկու գլխաւոր իշխանսն մեր[1] ետուն ի բանտ արկանել, և կամեցան թէ զազգն մեր ջնջել տայցեն. բայց Տէրն ողորմեցաւ և փրկեաց. բայց յոլով դրամ և մերքն խարջեալ էին, և պարտք աբարեալ. և զկնի մեր գիր և մահսէր յղեցին յԵրուսաղէմ, թէ թարց պատճառի եղեալ գայցես ի Ստամպօլ։ Եւ մեք ի թուին ՌՃՁԵ ի մայիսի վեց ելաք յԵրուսաղէմէ յորդաբուխ արտասուօք, և ընդ ծով և ընդ ցամաք բազում խղճութեամբ և տառապանօք եկաք ի Ստամպօլ. և զբազում պարտսն զորարբեալս՝ Աստուծով վճարեցաք։ Եւ վասն բանին մերոյ ի շատ դրունս անկաք, և ոչ ե-

(1) Միքայէլ վարդապետ Չամչեան բանտարկուողները երեք հոգի էին կըսէ, բայց և ոչ ինքը ով ըլլալնին կը յիշէ յանուանէ։



digitised by A.R.A.R.@

ղեւ . յետոյ ի Փրանկսըզի Իշչիի մօտն գնացաք, և նայնձն էառ զմեր ՏԷ-ԴԷՈՒՄՆ առնուլ և մեզ տալ, և զմեր ՎԵՆԷՏԻԿԷՐՈՒ Բայրախն ի շալէն վերցընել. զի . . . ազգն Յունաց զամէնն Բայրախն տուած է առնել. և այս մի ամ եղեւ և այլ աւելի, զի սպասեմք, և նա համբերեցէք ասէ մեզ և ոչ այլ ինչ: Իսկ սոյգն այս է, զի յօրէ յորմէ ի սուրբ Երուսաղէմէ ելեալ եմք մինչեւ ցայժմ, վասն իմ ծուլացեալ մեղաց՝ անյաջողութիւնն զմեզ պատեալ է . բայց փառք և գոհութիւն Աստուծոյ, և ինքն Տէրն ամենայնի մեր խղճմտութեանս ճար և հնար մի արասցէ, և զգործս մեր յաջողեսցէ. ամէն:

Ի նախկին կարգ բանին մեր եկեացուք. զի անդ ի Գալատ սուրբ Լուսաւորչեան եկեղեցին զսուրբ Պասեքն տօնեցաք. օրհնեալ լիցին յԱստուծոյ քահանայքն եւ ժողովուրդքն, զի անչափ սիրով և մեծարանօք զմեզ պատուեցին: Իսկ ի մայիսի մէկ ի Խասգիւղ գնացաք ի տուն Օքսուզ օղլի մահտեսի Աբրահամին, և անդ օթեցաք: Եւ ի մայիսի երկու եկաք յՍկուտար ի մեր վանքն: Յօգոստոսի մէկ եկաք ի Ս. Աստուածածնի եկեղեցին, և անդ զտօն սուրբ Վերափոխմանն կատարեցաք. ժամարար մեղաւորս իմ մեծ զգեստիւն: Իսկ յօգոստոսի քսան եւ հինգ ի շաբաթի օրն յերեկոյին ուխտաւորացն ի Պումզափուէն ուխտաւորօք ել և գնաց, զմեծ զգեստն այլ յղեցի. Տէրն ամենայնի զամենեսին ի սուրբ Երուսաղէմ հասուսցէ խաղաղութեամբ. ամէն:

Իսկ ի նոյն շաբաթ երեկոյին եկաք յՍկուտար ի մեր վանքն, և մնացաք անդ՝ զտօն վերացման սրբոյ Խաչին ի սուրբ Խաչի եկեղեցին կատարեցաք ի Թաղն Սելամսըզ կոչեցեալ և յետ սակաւիկ ի Մորագայ սրբոյ Խաչի բարեկենդանի կիւրակէին՝ մինչ մեք ի Գալատու եկեղեցին էաք, լուաք թէ Սլըայ Մէքայէլ Կաթողիկոսն յՍկուտար եկեալ է ի մեր վանքն, և զտօն սրբոյն Գէորգայ ի Սուլումանաստըրու եկեղեցին կատարեցայ ի միասին . . . : Իսկ ի հոկտեմբերի տասն եւ ութն Վէզիր Եղէօզ Մէհմէտ փաշայն ի պատերազմէն դարձեալ՝ եմուտ ի Ստամպօլ մեծաւ փառօք, զՊէլղրատ քաղաքն առեալ: Իսկ ի նոյեմբերի մէկն եկաք ի սուրբ Աստուածածնի եկեղեցին վասն գործոյն մերոյ զոր Տէր յաջողեսցէ. և ասացաք զմահ սիրելի եղբօրն իմոյ Անդրիասի աստուածաբան Յարութիւն վարդապետին, որ ի Յամիթ սուրբ Երուսաղէմայ նուիրակ էր, եկեալ ի Շնքուշայ վանքն վախճանեցաւ, և անդ թաղեալ կայ. հոգւոյ նորա Աստուած ողորմի. ամէն.

Աստուծով ի թուին ՌՃՁԸ (1739) ի դեկտեմբերի քսաներեք, մեր սուրբ Աթոռոյ ՏԷ-ԴԷՈՒՄՆ նորոգեցաւ. եւ մեծագոր Արքայն իւր ձեռագրաւն կնքեաց միջնորդութեամբ Փռանկաց. զի բարեպաշտ Իշչի պէկին. տէր Աստուած իւրն և իւրայնոցն կեանք տացէ. ամէն: Բայց Յոյնքն շարք՝ կըլկին ի նախանձ շարժեալք այսր անդր անկեալք, յետ ամսոյ միոյ և նոքա եւս առին գիր. բայց երկուց ազգաց՝ Հայոցս և Յունաց հրամանն մի եւ նոյն է. զի զինչ որ յերկուց ազգաց ձեռքն (կայ, այնպէս կացցեն), եւ մինչեւ ցայժմ թէ որպէս կենցաղավարեալք են, այնպէս վարիցին այժմ և առյապա. և ընդ միմեանս վէճ, խռովութիւն և կռիւ մի՛ առնիցեն (1):

---

(1) Այն վէճը այսպէս լմնալէն յետոյ, Գրիգոր և Յովհաննէս երկու Պատրիարքունք Վ. [illegible]

Եւ զի յայժմ միջոցի յոլով դրամ խարջեցաւ և կրկին ի ներքոյ պարտուց անկաք, վասն որոյ յորժամ սուրբ պահոց մեծի աւուրքն եկին (1740), երկու յԱստուծոյ օրհնեալ էֆէնտին սարաֆ և հացագործ փարպետքն տեսեալ զխղճմտութիւնս մեր, լաւ խմտապէ ողորմութիւն ետուն մեզ առ հասարակ ամենեքին. տացէ նոցա տէր Աստուած զկեր առատ ողորմութին։ Իբրեւ այս այսպէս եղեւ, լուան և այլ էֆէնտին, և նոքա եւս ետուն ողորմութիւն ըստ կարեաց. և նոցա եւս Տէրն ողորմեսցի։ Զսուրբ պասեքն ի սուրբ Աստուածածնի եկեղեցին տօնեցաք, և ի նոր կիւրակէին գնացաք ի սուրբ Գէորգայ եկեղեցին, և անտի ի Պալատու սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին, և անտի ի Գալաթիոյ սուրբ Լուսաւորչի եկեղեցին. յինանց կիրակիքն ի վերայգրեալ սուրբ եկեղեցիսն մէկ մէկ պատարագ մեղաւորս մատուցի, բարեաւ մնա ասելով օրհնեալ քահանայից և ժողովրդոց. կրկին եկաք ի Ս. Աստուածածնի եկեղեցին, զտօն սուրբ Երեւման և զսուրբ Հոգւոյն Աստուծոյ գալստեան անդ կատարեցաք. և անդ եւս բարեաւ մնա ասելով, ի մայիսի քսան եւ հինգ անցեալ եկաք յՈւսկուտար ի մեր վանքն։ Եւ անդ մնալով ի Վարդավառին. և զկնի տօնին եկաք ի սուրբ Աստուածածնի եկեղեցին, զպատրաստութին ճանապարհի տեսանելոյ։ Եւ յայժմ միջոցիս թէ զի՞նչ կամ որպէս եղեւ խղճալի կեանքն իմ, ոչ կարեմ ընդ գրով արկանել. միայն համառօտն այս. զի զկնի տօնի վերափոխման Մօրն Աստուծոյ, յօգոստոսի քսան եւ հինգ ելաք ի Ստամպօլու և մտաք ի նաւն. բայց և այս եւս մի լցի ծածկեալ, զի բազում արգեամբք ի Բիւզանդն մտաք, և յոլով պարտիւք ելաք. եւ յայնմ գիշերի ի վերայ երկաթի մնաց նաւն, և ի միւս աւուրն ընդ երեկս էլան առարեալ յաջողակ հողմով Աստուծով եկաք ի Թէքիրտաղ. և բազմաւ մեծարանօք զմեզ ընկալան տեղւոյ առաջնորդ սիրելի որդին մեր Յովհաննէս վարդապետն և քահանայքն և ժողովուրդքն. և զմի գիշեր անդ մնալով զառատ ողորմութիւն եւս ետուն։ Եւ յետ սրբոյ պատարագին զոր անարժանս մատուցի, բազում շնորհակալութեամբ օրհնելով զնոսա եկեալ մտաք ի նաւն, և խաղաղ հողմով եկաք ոչ սակաւ հեռի ի Գօզազ հիսարու. վասն իմ մեղացն նաւն ծանրաբեռնեալ խրեալ ի մէջ աւազոյն նստաւ. և տասն եւ ութն ժամ բազում նեղութիւնս կրելով, ի Տեառնէ օգնութիւն հասեալ հազիւ նաւն ի տեղւոյն շարժեալ՝ Աստուծով եկաք ի Գօզազ հիսար. զմի գիշեր անդ օթեցաք։

Եւ անտի ելեալ յայլ կղզին ոչ հանդիպեցաք, և ի գիշերի անցեալ զՄատոս կղզին, որ ընդ առաւօտն եկեալ տրտմութի տայ, թէ նաւն ջուր կը քաշէ. և սակաւ առ սակաւ զջուրն բազմացաւ, զի ջուրն իբրեւ զաղբիւր հոսիւր. և այր և կին զա-

դանին միջնորդութեամբը առաջարկեցին Յունաց Բադրիկին Պատրիարքին, որ նոյն միջոցները Մելետիոսին յաջորդեր էր, որպէս զի վերջնական խաղաղութեամբ վախճան տալու համար երկու ազգաց մէջ ի վաղուց հետէ ծագած տարաձայնութեանց, դաշնակցութիւն մի ընեն մէջերնին և փոխադարձ ստորագրութեամբ միամտեցընեն զիրար և ազգաց միաբանութիւնները։ Յիշեալ թուղթը Թանգարանիս մէջ կը գտնուի խաղերէն լեզուաւ և Բադրիկինին ստորագրութեամբ և կնքովը, որոյ մէջ կը յիշուի նաև դեսպանին միջնորդութիւնը։ Տուեալ է 7 ապրիլի 1739։

Այն դաշնագիրը՝ որ շնորհիւ Ս. Աթոռոյս գրադիր պատուելի Տ. Հ. Թ. Սուքիասեանցին գտնուեցաւ, կրնայ օգուտ մի ընել Պօլսոյ Պատրիարքի ժամանակ եղած վերջին դատերուն մէջ, երբ Յոյնք կրկին դատ բացին Ս. Յակոբեանց վանքին համար։

digitised by A.R.A.R.@

ղաղակ բարձին։ Իսկ մեք յԱստուած յուսալով՝ քաջ արանց ու խոստովանողաց դրամ խոստանալով հրամայեցաք ըզջուրն քարշել գուլով և ի ծովն հեղուլ. և չորս օր զախ և զգիշեր անհանգիստ աշխատութեամբ ի նաւէն զջուրն քարշէին, և որ ի վերայ աւուր յաւելոյր ջուրն. և մեր ամենեցուն ի կենաց յուսահատեալ, եւ միայն ձիչ բարձեալ թէ ի Կիպրոս գնասցուք. և զի հողմ ոչ գոյր, և այն եւս չեղեւ հնար։ Իսկ անհուն խնամք բարերար մարդասիրին Աստուծոյ հասեալ տառապելոցս, ի շաբաթի օրն ի ցերեկի յութ ժամուն ոմն մի նաւավարացն ի բարձր տեղւոջ ելեալ առ ի դիտել՝ թէ յուրում վայրի եմք, գոչեաց յանկարծակի, թէ ահա Եաֆայու լերինքն երեւին. և իբրեւ լուաք, և հաստատեցաւ բանն ասացեալ, ամենեքեանս ի միասին իբր ի խորոց անդնդոց զաղաղակ բարձեալ մեծաձայն զԱստուած օրհնեցաք։ Եւ զի հողմ եւս ոչ գոյր, յանկարծ շնչեաց քաղցրագին, և յերեկոյին շաբաթու ի սեպտեմբերի եօթը, Աստուծով ելաք ի նաւահանգիստն Յոպպէ, զոչինչ կրելով վնաս. և գտաք անդ եկեալ ըզսիրելի որդին իմ զաթոռակալ Գաբրիէլ աստուածաբան վարդապետն եկեալ ընդ առաջ մեր. զթարգման տիրացու Պօղոսն, և զայլ կարգաւոր միաբանսն. և տեսեալ զմիմեանս արտասուախառն խնդութեամբ գոհացաք զԱստուած։ Եւ ի վաղիւն զտօն ծննդեան սուրբ Աստուածածնին կատարեցաք. և զքանի օր անդ մնալով, ապա եկն սրբոյ քաղաքի մուսէլլիմ խուլ Մուստաֆայ աղա անուն, եւ այլք բազումք ընդ նմա։ Եւ անտի ելեալ եկաք ի Ռէմլէ ի սուրբ Գէորգ վանքն մեր. զտօն վերացման սըրբոյ Խաչին անդ կատարեցաք. Եւ ի սեպտեմբերի տասն եւ հինգ, յերկուշաբթի օրն բազում ամբոխիւ երկու Մուսէլլիմօք Տեառն յաջողմամբ եկեալ մտաք յԵրուսաղէմ յերկնահանգէտ սուրբ Աթոռս Քրիստոսի. և ի տեսանել զսուրբ տունս և զմիաբան եղբայրութիւնս՝ երկնային խընդութեամբ լցեալ, մեծաւ բաղձանօք համբուրելով զսուրբ Գլխադիրն և զսուրբ խորանսն լուսոյ՝ երկրպագած դիմօք և բազում արտասուօք գոհանալով զԱստուծոյ։

Գրիգոր հայրապետ իւր ուղեւորութեան պատմութիւնը այսպէս վերջացընելէն յետոյ, սկիզբէն մինչեւ վերջը այսինքն չորս տարուան և չորս ամսուան և ինը օրուան մէջ ինչ ծախք որ ըրած է, հանդերձ եկամուտը կը յիշատակէ, և հաշուէկշիռը յայտնի մէջ կը բերէ, որ է 238·557 ղուրուշ։ Եկամուտն է սուրբ Աթոռէն հետը տարածն և տուքէն բերել տուածը, նուիրակութիւներէ եղած արդիւնքները, իւր ձեռօք ընդունած ողորմութիւնը, էսնաֆներէ էմփաքէն, և փոխառութիւն։ Իսկ ծախուց մէջ նըշանաւոր է մի միայն հաքքէջէրէֆի համար տուածը որ է 84·350 ղուրուշ, ասկէ դուրս է Բ. Դրան մարդոց տրուածները 6000 ղուրուշ։ Դարձեալ սոյն 238·557 գումարէն դուրս է յԵրուսաղէմ դառնալուն քաղաքացի տաճկաց, չէխից և այլոց ընծայած պարգեւները, «զորս ոչ կարացաք, կ'ըսէ, գրել վասն բազմութեան աւուրացն»։ Այն հաշիւները, զոր ամենայն ճշդութեամբ մէջ կը բերէ, կնքելով Աբրահամ Հայրապետը քաղցր ուրախութեամբ և իբր ի ծանր բեռէ թեթեւցածի պէս կը գրէ, ի ծանօթութի ապագայից թէ ինչ պարտք

digitised by A.R.A.R.@

